ԿԱՐԾԻՔ

Ռուզաննա Սլավիկի Ժամկոցյանի ԺԹ. 00. 01- «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման «Հոգեբանական պաշտպանական մեխանիզմների և անձնային որոշ բնութագրերի փոխհարաբերությունների դինամիկան՝ անձի հասունացման տարբեր փուլերում» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Հոգեբանական պաշտպանական մեխանիզմների հիմնահարցը բավականաչափ ուսումնասիրված է, սակայն դեռևս բացակայում է ընդհանրական հայեցակարգ՝ հոգեբանական պաշտպանական մեխանիզմների ամբողջ համակարգի մասին, ուսումնասիրված չեն նաև հոգեբանական պաշտպանական մեխանիզմների ձևավորման համար Ես-ի զարգացման զգայուն շրջանները և դրսևորման օրինաչափությունները:

Ատենախոսական հետազոտության նպատակը նախատեսում է բացահայտել հոգեբանական պաշտպանական մեխանիզմների և անձնային կառույցների հատկությունների համահարաբերակցության առանձնահատկությունները՝ անձի զարգացման տարբեր փուլերում, որի համաձայն առաջադրված է համապատասխան վարկած: Ըստ Ռ. Ս. Ժամկոցյանի առաջադրված վարկածի ենթադրում է, որ անձնավորության կողմից պաշտպանական մեխանիզմների ընտրությունը պայմանավորված է տարիքային տարբեր փուլերում նրա անձնային կառույցների և անձնային մի շարք բնութագրերի զարգացման մակարդակով: Ատենախոսական աշխատանքում առաջադրված են նպատակին և վարկածին համապատասխանող 6 խնդիրներ: Հետազոտությանը մասնակցել են 94 անձ՝ 14-15 տարեկան 47 աշակերտներ և 22-25 տարեկան 47 ուսանողներ: Հետազոտական ընտրանքը

համապատասխանում է ներկայացուցչության և տարիքային համապատասխանության չափանիշներին: Հետազոտության ընթացքում կատարվել է թեստավորման մեթոդը, որը ընդգրկում է պաշտպանական մեխանիզմները, անձնային հատկությունները և կառույցները ուսումնասիրող 10 ստանդարտացված մեթոդիկաներ:

Ըստ հեղինակի հետազոտության գիտական նորույթը կայանում է հետևյալում՝

- պաշտպանական մեխանիզմների և անձնային հաըկությունների, կառույցների փոխազդեցության օրինաչափությունները՝ տարիքային տարբեր փուլերում:
- ինքնագիտակցության զարգացման մակարդակի և հոգեբանական պաշտպանական մեխանիզմների համահարաբերակցության առանձնահատկությունները:
- հասուն պաշտպանական մեխանիզմների ձևավորման հոգեբանական գործոնները:

Ատենախոսության առաջին գլուխը (Հոգեբանական պաշտպանական մեխանիզմների հիմնախնդիրը գիտական գրականության մեջ), որը բաղկացած է 3 ենթագլխից, ներկայացնում է պաշտպանական մեխանիզմների ուսումնասիրության հիմնական մոտեցումները, գործընթացները և գործառույթները, ելակետային հասկացությունների մեկնաբանությունը, հոգեբանական պաշտպանական մեխանիզմների հիմնախնդիրը անձի կառուցվածքում:

Տեսական վերլուծության արդյունքում հեղինակը եզրակացնում է, որ հասուն անձի առանձնահատկություններից է կառուցվածքի առանձին բաղադրիչների հասունությունը: Հասուն անձը պետք է ունենա զարգացած ինտելեկտ, կարողանա կատարել բարդ կամային գործողություններ և կառավարել հույզերը:

Ատենախոսության երկրորդ գլուխը (Հոգեբանական պաշտպանական մեխանիզմների և անձի բնութագրերի՝ անձնային կառույցների, հատկությունների փորձարարական ուսումնասիրություն) բաղկացած է 3 ենթագլխից, որտեղ

ներկայացված են հետազոտության իրականացման տրամաբանությունը, ռազմավարությունը, մեթոդաբանական հիմքերը, փուլերն ու ներգրավված ընտրակազմի հիմնավորումը: Մանրամասն ներկայացված են փորձարարական հետազոտության համար ընտրված և կիրառված քանակական և որակական վերլուծության, մաթեմատիկական վիճակագրության մեթոդները և թեստավորման շրջանակում օգտագործված մեթոդիկաների էությունն ու անցկացման ընթացակարգերը: Սույն գլխում 4 ենթագլխի առկայությունը վկայում է այն մասին, որ հեղինակը մանրամասն և հիմնավորված ներկայացրել է ընտրանքի տարբեր տարիքային խմբերի հետ իրականացրած թեստավորման արդյունքների համապատասխան վիճակագրական վերլուծությունը: Կարևոր է նշեր, որ դուրս բերված կորելացիոն կապերը և դրանց հավաստիության աստիճանը հստակ մեկնաբանված է, ինչը վկայում է երկու տարիքային խմբերի հոգեբանական պաշտպանական մեխանիզմների և անձնային կառույցների միջև արձանագրված յուրօրինակ համահարաբերակցային կապերի մասին:

Ընդհանրացնելով պարզ է դարձել, որ դեռահասների անձնային բնութագրերի և հոգեբանական տարրական պաշտպանական մեխանիզմների միջև ավելի շատ են համահարաբերակցային կապերը: Ըստ այդմ, դեռահասության տարիքում անձնային կառույցների և հատկությունների պաշտպանությանը ավելի շատ են մասնակցում տարրական պաշտպանական մեխանիզմները: Իսկ երիտասարդների հոգեբանական պաշտպանական մեխանիզմների և անձնային հատկությունների, կառույցների ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ դրանց պաշտպանությանը ավելի շատ մասնակցում են հասուն պաշտպանական մեխանիզմները:

Ատենախոսական հետազոտության արդյունքում դուրս բերված 5 եզրակացությունները բխում են տեսական և փորձարարական աշխատանքի արդյունքներից և համապատասխանում են առաջադրված նպատակին և խնդիրներին:

Ռուզաննա Սլավիկի Ժամկոցյանի ատենախոսությունը ավարտուն գիտական աշխատանք է՝ շարադրված գրագետ գիտական լեզվով և ոճով: Հետազոտության արդյունքները հավաստի են: Հեղինակի կողմից հրատարակված 9 հոդվածները լիովին արտացոլում են հետազոտված հիմնախնդիրը, ատենախոսության սեղմագիրն ամբողջությամբ արտացոլում է ատենախոսության հիմնական բովանդակությունը:

Անդրադառնանք մեր կողմից ատենախոսության մեջ բացահայտված որոշակի թերություններին և նկատառումներին:

1. Ատենախոսության 2.1 ենթագլխում հեղինակը ներկայացնում է հետազոտության մեջ կիրառված 10 թեստ (էջ 75-78), սակայն չի հիմնավորում այդ թեստերի ընտրության սկզբունքները և չափորոշիչները:
2. Ատենախոսության տեսական հատվածում (էջ 11-71) վերլուծված են հոգեբանական պաշտպանական մեխանիզմների հիմնախնդիրները, որտեղ բավարար չափով ընդգրկված չեն հայ հեղինակներ աշխատություններ (Օրինակ՝ 1. Բժշկական հոգեբանություն. ուսումնական ձեռնարկ, 2015. 2. Հարությունյանի Ա.Կ. «Հոգեբանական պաշտպանական մեխանիզմները անձի տեսության համատեքստում» գիտական հոդված, 2013):
3. Նկար 1 (էջ 70) ներկայացված է հասուն անձի դիտարկումը ըստ Բ. Անանևի «Անձի կառույցի» գծապատկերը, սակայն ատենախոսը որևէ մեկնաբանություն չի ներկայացնում:
4. Ատենախոսության տարբեր բաժիններում հանդիպում են տեխնիկական վրիպումներ (էջ 79-80 վիճակագրական հայտնի բանաձևերի ներկայացում, ինչը հավելյալ ծավալ է զբաղեցնում, նաև սխալ թարգմանություններ (էջ 29 պրոցես, էջ 51 ինֆորմացիա, էջ 72 մեթոդոլոգիա),
5. Ցանկալի կլիներ գործնական առաջարկներում բացի վարժանքներ մշակելու առաջարկից հեղինակը նաև ներկայացներ հասցեագրված ու կոնկրետ ռազմավարություններ:

Նշենք, որ նշված դիտողությունները և նկատառումները մասնավոր բնույթի են և ամենևին չեն անդրադառնում ատենախոսության գիտական արժեքի վրա:

Այսպիսով եզրակացնում ենք, որ Ռուզաննա Սլավիկի Ժամկոցյանի ԺԹ. 00. 01 - «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման «Հոգեբանական պաշտպանական մեխանիզմների և անձնային որոշ բնութագրերի փոխհարաբերությունների դինամիկան՝ անձի հասունացման տարբեր փուլերում» թեմայով ատենախոսությունը լիովին համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին: Որպես ավարտուն գիտական աշխատանք այն իր բնույթով նորություն և հոգեբանության բնագավառում կարևոր նշանակություն ունեցող խնդրի լուծում է: Գտնում ենք, որ ատենախոսության հեղինակ Ռուզաննա Սլավիկի Ժամկոցյանը լիովին արժանի է իր հայցման գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս՝

հ գ. դ., պրոֆեսոր Հրանտ Միքայելի Ավանեսյան

Հ. Մ. Ավանեսյանի ստորագրությունը հաստատում եմ.

Երևանի պետական համալսարանի գիտական քարտուղար՝

բ.գ.թ. Մերի Հովհաննիսյան

07.06.2023